

XIII Գ. ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇՏԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆՈՒԹԱԿՐԻՆ

Ա. Հ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

XIII դարի բժշկարանների¹ բառապաշարը հիմնականում հենվում է կենդանի խոսակցական լեզվի վրա, թեև զգացվում է գրաբարյան բառաշերտի մեծ ազդեցությունը: Միջին գրական հայերենի շրջանում գործառուղ բազմաթիվ բարբառների ընձեռած բառային հարուստ նյութը ունենում է իր որոշակի դերը գիտական, մասնավորապես բժշկական աշխատությունների ստեղծման և ավանդման մեջ: Այսպես, ուսումնասիրվող բժշկարաններում հանդիպում ենք նման բառերի և արտահայտությունների. աղէկ (ԲԶ, 48), դննալ (Գր, 93), թշեր (Գր, 97), կործել (ԳՀ, 391), տքուն (Գր, 28), քրքիր (Գր, 42), ի լական արկ (ԳՀ, 329), ինչվի լմննա (ԳՀ, 263), խառնէ և յիսկոց (ԳՀ, 261), կուշտքն ուռէնա (ԳՀ 242), հերիքէ խմեո (ԳՀ, 385), ձու մի թերխորով (ԳՀ, 242), ձվախաւիծ (ԳՀ, 289), որ յանգողիցն շոէ (ԳՀ, 305), և քամակին դոյրէ (ԳՀ, 302), և քո չարկամն աշէ (ԲԶ 76) և այլն: Բացի նման բարբառային-խոսակցական տարրերից, երևան են զալիս բառեր, որոնք թեպետ վկայված են գրաբարյան շրջանում, սակայն միջին գրական լեզվում արտահայտում են նոր իմաստներ կամ իմաստային երանգներ, ինչպես օրինակ.

բարակ— գրք. «նուրբ»— միջ. հայ. «չերմի տեսակ» եւ այլ, զոր ասեն իմաստունքն, վասն ջերմանցն, որ ասի բարակ ջերմն (Գր, 27)

գան— գրք. «ծեծ, հարված»— միջ. հայ. «վնասվածք, վերք», որ շուրջն այս գանիս հաստ լինի և շրջի դէպ ի դուրս (Գր, 33)

զուգեմ— գրք. «զուգավորել, զողել, շաղկապել»— միջ. հայ. «պատրաստել» եւ թէ զայս մանուշկի ըմբելիս զուգես ծամ ծամի տաքութենէ ցալի մեծ օգուտ է (ԳՀ, 284)

տես— գրք. «տեսք, տեսիլք»— միջ. հայ. «տեսողություն» յործամ հաստատես և ուսնիս զայս, զոր ասացաք, ընդելմայ քո տեսող ընդ աղէկ նշաննին (ԲԶ, 48)

Քննվող բժշկարանների մեջ դրսևորվում է համահիշ բառերի անկաշկանդ գործածությունը: Այդ շարքերը ընդգրկում են տարաբնույթ անդամներ, որոնք գոյանում են տարբեր լեզվական շերտերից՝ գրական, բարբառային, փոխառյալ, մի կողմ թողած դեռ ոճերը: Ներկայացնենք բժշկարանների լեզվին հատուկ մի քանի համահիշային շարքեր. ատամ-ակոռայ, արկանեմ-ածեմ, յաւ-աղէկ, խափակ-սքթէ-փաղաղ, խթինակ-խնախ-նեղձուկ, ծակեմ-խոռեմ, կծանեմ-խածեմ, մալանխօլիայ-մաղասակաթ, մաքուր-յիստակ-սարկիկ, մողես-խլեզ, նասուր-ցեց-գէշցաւ, պուտուկ-կնիճ-ծափ, ցաւ-նեղ, փափուկ-կակոռ: Ինչ խոսք, բացի գրաբարյան ծանոթ բառամթերքը ժառանգելուց, այս բժշկարանները երևան են հանում գրաբարյան մատենագրությունից անհայտ, նոր բառեր: Դրանց մի մասը բառարանագրված է միջին հայերենի վերջերս հրատարակված բառարանում²: Ստորև, մեր կողմից բերվող օրինակները, եթե անգամ բառարանագրված են, ապա դրանց առաջին վկայություններն են: Նմուշները բերվում են ըստ ուսումնասիրվող բժշկարանների ընդունված հաջորդականության (ԳՀ, Գր, ԲԶ).

ապո — «ձկնորսական կարթ» — ձկնորսն ապո ձգէ ի գետ (ԳՀ, 343): Ըստ ՆՀԲ-ի բերած վկայության (1, 277), Ֆրա Մարթին պատմիչի (14-րդ դար) լատիներենից

¹ «Գագիկ-Հեթումյան» բժշկարան, 3-րդ մաս, Վենետիկ, Սբ. Ղազար, ձեռ. № 1281 (այսուհետև ԳՀ), Գրիգորիս — «Քննություն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և պատճառանց ցաւոց», աշխատասիրությամբ Ա. Ս. Կոնյանի, Երևան, 1982 թ. (այսուհետև Գր.), «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ», աշխատասիրությամբ Բ. Լ. Չուգասզյանի, Երևան, 1980 թ. (այսուհետև ԲԶ):

Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. 1—2, Երևան, 1987, 1992:

կատարված թարգմանության մեջ է օգտագործվել: Արդ, մեր օրինակը, թերևս, առաջին գրավոր վկայությունն է:

Ծառայկան— «ծառայողական» — նա **ծառայկան** գմատն է պալատեցի ձեռն և մեղն թանա (ԳՂ, 380): Նկատի է առնվում ցուցամատը, բառի առաջին վկայությունն է:

Ծափ — «պուտուկ» — ընկոյզ ծեծել և **ծափով** է կրակն դիր, որ զձեռն է դուրս ձգել (ԳՂ, 328): Համանիշ է պուտուկին և կհիճ-իճ, որը հավաստվում է Ամիրդովլաֆի մոտ գրաբարյան «պուտուկկոտրուկ» տերմինի «ծափկոտրուկ» փոխարինումով (ԱՍԱԱ, 385): Գործածական է նաև Ալշ. Ախց., Մկ. բարբառներում (ՀԱԲ, 2, 451):

Կոնջ — «կնճիտ» — եւ դիպի է ճակտին կաշին **կոնջ** մի և գաղտունն գուփ լինի (ԳՂ, 386): Սա կնճիտ բառի դրափոխված ձևն է: Նույն ժամանակաշրջանի մի այլ թժշկաբանում առկա է բաղադրված տարբերակով. «մսանցն միսն **կողնմտած**» (ԲԶ, 58բ):

ճմլատիլ — տես թէ ճմլադի թէ ոչ և սիրտն **ճմլատի** (ԳՂ, 240): Վերջինս ճմլեմ բառի ածանցական տարբերակն է, որ ծագում է Հ. Ե. *gem «բռնել, սեղմել» արմատից (Գ. Զահուկյան, ՀԼՊ, 72):

յուշկիկեցնուլ — «զգուշորեն վարվել, մեղմացնել, հանգստացնել» — թէ հազա կամ զերեսօքն ուամատիս լինի և ի լեզվին իմ (=ի վերա) **յուշկիկեցնուլ** պիտի զի շատ պըլ-դամ ձգել է վեր (ԳՂ, 384): Այլ միջնադարյան աղբյուրներում հանդիպում է՝ յուշկիկ «զգույշ» ածականական կիրառությամբ (ԱՄԳՂՊ, 1, 255):

ջոճնճնիլ — «ջրակալել, ցողվել» — աղա, մաղէ, հոռոմ ձիթով շաղէ և օծ յարև կամ ի բաղնիք բորո, որ **ջոճնճնի** (ԳՂ, 377):

սրտհեշտ — «ախորժելի, հանելի» — **սրտհեշտ** կենա և ի մտավժելո խիստ պատուըստցո (ԳՂ, 292): Սա բազում վկայություններ ունի միջնադարյան աղբյուրներում, բայց ներկայացված օրինակը, թերևս առաջինն է:

վանճին — «կաթից անջատվող ջրաչին մաս, շոտա, շիճուկ» — ոչխրի **վանճին** կ(=կամ) կովու թան խախաշեցո (ԳՂ, 261): ԳՂ, 1, 112 ասված է. «ջուրն որ է վանճին, տաք է և լոյծէ, բաց զինք գարունն մէն պիտի տալ»: Հ. Հ. Աճառյանը բերում է՝ վանճնատ «մի տեսակ պանիր» որ կազմված է մածուց+հատ (ՀԱԲ, 4, 305): Սակայն, մատենագրական նյութը չի հաստատում այս բացատրությունը: Բերենք երկու փաստարկ. ԳՎ, 260 վանճնատ-ը բացատրում է իբրև՝ աղի սեր կաթին, քամեայ ի շոտաէ, այսինքն՝ շոտ, որը հաստատվում է նույնիմաստ վրաց. անձլատի բառի առկայությամբ: Երկրորդ, ԳՂ, 1, 112 վերը նշված հատվածից անմիջապես հետո խոսվում է նաև մածուց-ի մասին և ոչ մի ակնարկ չկա այս երկուսի նույնության վերաբերյալ: Արդ, վանճնատ-ի մեջ պետք է տեսնել՝ վանճին+ատ կազմությունը:

փին — «աղբ, կղկղանք» — եւ **զփին** զաղվեսու թէ ածքէ կին ընդ որովայնն լեցել ընդ առն յղանա (ԳՂ, 368): Այն ծագում է Հ. Ե. *phen /sp(h)en արմատից (Գ. Զահուկյան, ՀԼՊ, 150, 193) և իր զուգահեռը ունի հուն. τίνος «կեղտ, ծանգ»:

փշոք — «փրփուր, քափ» — պարզած անուշ զինի տուր փոքր կթխայով և **զփշոքն** ձգել (ԳՂ, 279):

քամնել — «այտուցվորել» — կուշտքն ուռնա և **քամնէ** և հետ ի հետ զինացքն տանի (ԳՂ, 242): Որպես բայական համադրական ձև այլ վկայություն չունի, «Գիրք Վաստակոց»-ում առկա է հետևյալ համատեքստի մեջ՝ այս անգամ վերլուծական կազմությամբ. «կպրեա և ձիթեա զամանն ի ներքուստ և ի դրուց, և զհնճանին քամն առ» (ԳՎ, 95): Սրան համանիշ է՝ փքոնի (ԲԶ, 108):

թալիլ — «աղտոտել, արտաթորել» — որ տեսանես զմարդն ողն ի պատակ, որ խօսիլ կարէ և ոչ շարժիլ և որ **թալիլ** (Գր, 71): Բառի մի այլ վկայություն առկա է **թալիլ** ձևով. «եւ (եթ) թափիլի, դու մի թողուր, որ շաղախն ի վրայն չորնայ» (ԲԶ, 85): Ստ. Մախխայանը բխեցնում է **թալալի-ից** (ՄՀԲԲ, 2, 84), որը հանդես է գալիս երկու նշանակությամբ. 1) նետել, շարտել, 2) խմել: Ավելացնենք, որ սրա կրճատ ձևը՝ **թալել** առկա է բարբառներում, ինչպես օր. Կամոյի բարբառում, ուր ունենք այսպիսի արտահայտություն՝ հան **թալ** դուս: Բերված օրինակները **թուլլ** են տալիս խոսել բառի երրորդ նշանակության մասին՝ աղտոտել, արտաթորել:

խնչխնչուկ — «քթի պնչեր» — գոր ճոռայ աչիցն դէպ ի քիթսն և ի **խնչխնչուկն** և ելնէ ընդ քթայփողն (Գր, 87): Ստ. Մախխայանցի մոտ ներկայացված է բայաձևը՝ խընչ-խընչել/խրխնչել (ՄՀԲԲ, 2, 278):

անդիմակաց — «չդիմադրող» — եւ շահրիկքն ու յարապ ձիւմ լինի **անդիմակաց** ի շուր աշխարք (ԲԶ, 58): Նույն աղբյուրում հանդիպում է նաև սրա հակահիշը՝ դիմակաց (ԲԶ, 47):

ծմալ — «տնքալ» — հանապազ **ծմալ** ու զգլուխն ի լերդին դենն դարձցնէ՝ յաջ դենի վրա, ուր ցաւն կայ (ԲԶ, 128): Այս բառը բառարանագրված է եղել Մախխայանցի կողմից

(ՄՀԲԲ, 2, 344), վերը բերված իմաստով, որին նոր բացատրություն է տալիս Բ. Չուգա-
ւրզյանը (ԲՁ, 208)՝ կապելով ԳՎ-ում առկա ծմին «փոքրիկ շնչահամ» տերմինի հետ (ԳՎ,
122):

հովամուտ — «օդափոխվող» — եւ գայն տեղն, որ յառվոյտն դնես, նա տես, որ սրտբաց
տեղ լինի ու հովամուտ (ԲՁ, 85): ՆՂԲ-ն արձանագրում է հովանուտ ձևը, որն իմաստով
չի հեռանում մեր բառից (ՆՂԲ, 2, 122):

հրահնաց — «հրարձակ, հուր արձակելով» — եւ լինի որովայնն ի ձվտկուցն ի հեռու,
զի թէ նեղ լինի՝ նա հրահնաց քշտէ ոտքն ու լինի գնային ի նման ի մատակ ձիով (ԲՁ,
47):

մարդձայն — «աղմկոտ տեղ, աղմուկ» — եւ յորժամ ի մարդձայնի մաւտ տանիս զհնք
(ԲՁ, 71): Բառի միակ վկայված աղբյուրը ԲՁ-ն է, ինչպես իրավամբ նկատում է Բ. Չու-
գասյանը (ԲՁ, 214):

սանդղմատ — «սանդղակ» — դու ընդ դար ի վեր զեղ սանդղմատներ ի վեր տար
զգրասուն (ԲՁ, 96):

փակչիլ — «կպչել» — նա փակչի ի սմբակն ի տաքութենէ (ԲՁ, 130):

Ինչպես յուրաքանչյուր գիտական ստեղծագործության, այնպես էլ բժշկարանների լե-
զուն, դժվար է պատկերացնել առանց յուրովի մշակված տերմինաբանության: 13-րդ դարի
հայ բժշկարանները այս առումով բացառություն չեն կազմում և ներկայացնում են տերմի-
նաբանական մի ամբողջական համակարգ, որի մեջ կարելի է առանձնացնել երկու շերտ՝
բառ-տերմիններ կամ տերմինային բառեր, ինչպես. **ածիկ, լուսայմուտ, խունկ, կաւ, ձվա-
խառն, պնտախորով, շուտտ** ևն և նեղ մասնագիտական տերմիններ, ինչպես. **անօթի աղիք,
գէջցաւ, գիղճ, դեղափոխակ, խաւարարտ, կարմրեղձ, մաղասակաթ, մաղասափուշ** ևն:
Տարբերությունը այս երկու տերմինային խմբերի մեջ բավականաչափ մեծ է, որը պայմա-
նավորված է մի քանի գործոններով: Տերմինային բառերը ունեն ավելի լայն գործառական
արժեք, հակված են ձեռք բերելու բազմիմաստություն և ցանկացած պահի կարող են
կորցնել իրենց տերմինային նշանակությունը, սակայն քնավ չեն կորցնում իրենց գործուն
դերը լեզվի մեջ: Նույնը չի կարելի ասել նեղ մասնագիտական տերմինների մասին, որոնք
անբակտեիորեն կապված են տերմինակերտ գիտական գաղափարի հետ և երբեմն, երբ
այդ գաղափարը հնանում է, նրա հետ նաև՝ տերմինը: Երբեմն տերմինը ևս, ինչպես լեզ-
վի մյուս բառերը, ձեռք է բերում բազմիմաստություն, ժամանակի մի հատվածում արտա-
հայտում այլ իմաստ, քան նախորդող կամ հաջորդող շրջանում, անգամ որևէ ժամանակա-
հատվածում օժտված լինում բազմիմաստությամբ, իսկ որոշ ժամանակ անց վերածվում
միանշանակ տերմինի: Այսպես՝ ջեղ տերմինը Աբուսայիդի մոտ հանդես է գալիս երեք
նշանակումներով: 1) նյարդ, 2) ջիլ, 3) մկան, այնինչ Հերացու մոտ գործածված է միայն
«նյարդ» իմաստով³: Բայց և այնպես, սա չի կարելի դիտել իբրև տերմինների հատկա-
նշական գծերից մեկը: Փաստերը խոսում են դրանց առանձին բացառություններ լինելու
օգտին:

Անդրադառնալով տերմինաշինության ուղիներին և կաղապարներին, նշենք, որ բժշկա-
կան տերմինաբանության ստեղծման ուղիները հիմնականում երեքն են. ա) լեզվի մեջ
եղած բառերի տերմինացում (սրանք ոչ միշտ են դիմանում ժամանակի քննությանը), բ)
սեփական բառակազմական միջոցներով նոր տերմինների կերտում և վերջապես գ) օտար
տերմինների ներմուծում:

Ուշադիր քննելով 13-րդ դարի բժշկական տերմինաբանությունը, կարելի է բացահայ-
տել մի շարք կաղապարներ, որոնք կարևորվում են տերմինակերտման յուրօրինակ եղա-
նակներով: Դրանք տերմինային կաղապարներ են, որոնք կազմված են՝ ցաւ, բերան, քիթ,
յեղ, փայտ, խոտ, տակ, ջուր, եղ, կաթ, հունդ, ճրագու, լեղի, կաւ, խեժ, խունկ և մի շարք
այլ բաղադրիչ-միավորներով, ընդ որում սրանց բաշխման ոլորտը տարբեր է:

1. ցաւ, բերան, քիթ բաղադրիչներով կազմվում են ախտանուններ և կազմախոսական
տերմիններ՝ ականջացաւ, բերնցաւ, գայլցաւ, երիկմնցաւ, ըղտացաւ, կշտացաւ, խոցբերան,
ծնաբերան, սմբակբերան, խոյաքիթ, տափքիթ ևն.

2. դեղ, փայտ, խոտ, տակ. բաղադրիչներով՝ դեղաթոյսեր և դեղամիջոցներ. կապու-
տակաղեղ, մշկաղեղ, ցամբղեղ, խաչափայտ, հողմփայտ, սանտլփայտ, արօսախոտ, ձար-
խոտ. մանգախոտ, քապըխոտ, աղբղբկի տակ, մարեմայ տակ, մրտի տակ, ցմխտակ ևն.

3. ջուր, եղ, կաթ, ճրագու, կաւ, խեժ, խունկ և այլ միավորներով կազմվում են տեր-
միններ, որոնք մեծ մասամբ՝ դեղամիջոցներ են, պատրաստուկներ կամ դրանց բաղադրա-
մասերը նշանակող անվանումներ են՝ անիսոնի ջուր, զկջուր, ձմերկի ջուր, մաննեխի ջուր,

³ Ս. Վարդանյան, Հայ բժշկական տերմինաբանությունը 12-րդ դարում, «Բանբեր մա-
ունանդարանի», 10, 1971, էջ 186:

գնկջուր, չամչի ջուր, տղտի ջուր, թուրթի ջուր, խմակեղ, կովուց եղ, սնգրվեղ՝ մնգրու եղ, ցոեղ ևն.

4. տերմինների մեկ ուրիշ խումբ բաղադրված է աշխարհագրական-տեղանվանական միավորներով: Այսպես. աշորեցի կա, խեթ լարապիկ, խորասանի չամիչ, կիպոսոցի կա, հայկալ, հեղի աղ, հեղկցի ծոր, հոռոմ ձեթ, ճահկացի աղ, շամի կապիկ, ուռհայցի խուռ-նուպ, պարսիկ լեղ, պարսիկ, շաքար, աղ պարսիկ, վրացի կոճ, քրմանի չաման, ֆոսակցի սպիտակ ևն:

Բժշկական աշխատությունների տերմինաբանակարգը բնութագրվում է նաև համանիշ-շայթամբ, որը պայմանավորված է ոչ խստորեն համակարգված տերմինակերտման երե-վույթով, երբ լուրաքանչյուր բժիշկ-հեղինակ փորձում է ստեղծել իր միկրոտերմինաբանու-թյունը: Սա հանգեցնում է մի կողմից «հարուստ» տերմինաբանության գոյացմանը, մյուս կողմից որոշակի խառնաշփոթ է ստեղծում ընդհանուր համակարգում և լուրջ խոչընդոտ-ներ հարուցում, ինչպես միջնադարյան հեղինակների փոխադարձ ըմբռնման, այնպես էլ ժամանակակից ուսումնասիրողի համար:

Վերջապես, XIII դարի բժշկարանների բառապաշարի անքակտելի մասն են կազմում մեծաքանակ փոխառյալ բառերը: Բնական է, որ բառապաշարի հարստացումը ի հաշիվ օտար բառերի և փոխառությունների ընդգրկում է ողջ միջին հայերենի շրջանը, որը պայ-մանավորված է եղել հասարակական-քաղաքական այն մթնոլորտով, լեզվական այն սնկաշկանդ շփումներով ու փոխազդեցություններով՝ հատկապես մերձավոր հարևանների հետ, որի մեջ գործատել է միջին գրական լեզուն⁴: Ուսումնասիրվող բժշկարանների փո-խառյալ միավորների մեծագույն մասը հայերենին է անցել գրական լեզվի միջոցով (մա-նավանդ գիտական տերմինաբանությունը), մյուս մասը անմիջական փոխազդեցության հե-տևանքով (բանավոր փոխառություններ), որոնց մի մասը իր հերթին տեղ է գտել գրա-վոր աղբյուրներում: Բժշկարանների փոխառությունների աղբյուրները բազմաթիվ են, որոնց մեջ գերակշռում են արաբական և պարսկական փոխառությունները՝ պայմանավորված գի-տական գրականության, մասնավորապես բժշկագիտական աշխատությունների թարգմանու-թյամբ և օգտագործմամբ: Զգալիորեն քիչ են հունական և լատինական փոխառությունները, որոնք մեծ մասամբ բժշկ. տերմիններ են, ինչպես. ամրոսիա, ասարոն, ասփաղզոն, աբ-կանիս, բաղասիտոն, բասիլիկ/վասիլիկոն, դիասիտոս, զոմին, էրիոն, լեպեդիս, լուստ-րոն, կապեմոպստին, կիպեոն, (ն)ամուտանթոս, ողիոստան, պանդոպան, ուամատիս, սանդիկոս, սասալիոս, սիմինոր, սկարորի, սպոնիս, ստոխոսոս, տախիլոն, տրիֆիլ, փրա-սիոն, քամատրիոս, ֆլարիոս:

Պետք է նշել, որ փոխառությունների իմաստային խմբերի բաշխման ոլորտը տարբեր բժշկարաններում տարբեր է՝ կախված բժշկական աշխատության նպատակադրումից, նրա լեզվատերմինային որոշակի ընդգրկումից. ավելի պարզ, մահճաբուժական և դեղաբանա-կան հարցեր արժարժող բժշկարանը (ԳՀ Ց-րդ մաս), բնականաբար, ավելի շատ է օգ-տագործում դեղաբույսերի, դեղանյութերի, բուժական պիտույքների անունները, քան, ա-սենք, ախտաբանական և կազմախոսական հարցեր քննող Գրիգորիսի բժշկարանը, որի սեջ անհամեմատ շատ են ախտանունները և կազմախոսական տերմինները: Ինչ վերաբերում է «Բժշկարան ձիոյ» աշխատությանը, այստեղ հավասարապես օգտագործվում են և դեղա-բանական և ախտաբանական-մահճաբուժական փոխառյալ տերմինները⁵:

Զննվող բժշկարանների բառապաշարի բնութագրական կողմերից մեկը բառակազմա-կան առանձնահատկություններն են: Այդ աշխատությունները, որպես միջին գրական հա-յերենի փաստացի մուշներ, աչքի են ընկնում բառակազմական բազմապիսի կաղապարնե-րով: Խոսքը վերաբերում է հատկապես բառաբարդմանը, առանց որի անհնար կլիներ բազմաբնույթ տերմինաբանական միավորների ստեղծումը և գործառնությունը: Վերլուծելով բարդությունների կառուցները՝ առաջին հայացքից ուշադրություն է գրավում հողակապով և անհոդակապ ձևերի տարբերությունը: Եթե փորձենք ի մի բերել և խմբավորել թուր ան-հողակապ և հողակապով բարդությունները, ապա կտեսնենք, որ սրանցից ոչ մեկը զգա-լիորեն չի գերակշռում մյուսին: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ բարդությունների մեջ իրենց գործառական ծանրաբեռնվածությամբ բուն բարդություններից հետո առանձնա-նում են կրկնավորները: Սա մեծ մասամբ պայմանավորված է բժշկարանների ոճական ա-ռանձնահատկությամբ: Կրկնությունների կաղապարման եղանակները տարբեր են. աչս-

⁴ Միջին գրական հայերենի փոխառությունների մասին մանրամասն տես «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա. Երևան, 1972, էջ 197—245, Ռ. Ղազարյան, Փոխառությունները միջին գրական հայերենում, ԲՆՀ, 1992, 2, էջ 17—24:

⁵ Արաբական և պարսկական փոխառություններին մանրամասն կանոնադրանք մի այլ առիթով:

տեղ հարմար ենք գտնում հենվել Համընդհանուր լեզվաբանական տեսության (ՀԼՏ) սկզբունքներով տարբերակման վրա⁶ և ցմուշները խմբավորել այսպես.

1. համակաղապարներ (գոյականական) — մաղմաղ, պոպոզ
 (ածականական) — բոլոր-բոլոր, խառնիմառն, ծակ-ծակ,
 մեծ-մեծ//մեծայմեծ, որիշ-որիշ//ուրիշ — ուրիշ, չոր-չոր, պաղ-պաղ, սուր-սուր
 տաք-տաք, փոթոթ, փոքր-փոքր
 (մակբայական) — յուշ-յուշ/յուշիկ-յուշիկ, շատ-շատ,
 քիշ-քիշ//քշիկ-քշիկ
 (քայական) — անցմնցել, գոգոալ, դևդևի, թաղթփվի,
 թթթթել, խոթխոթել, խտղտալ, կաթկաթել, հակհակել, հոտտալ, շրջմրջիլ, շրջկտիլ, փըշ-
 փըշտիլ, փոխփխել, փրփրալ, քրքրիլ
 2. փոխկաղապարներ (գոյ+գոյ=ած) — խալ-խալ, կէտ-կէտ, շող-շող, փուշ-փուշ
 փուշ
 (գոյ+գոյ=մկբ) — ափ-ափ, բուրմ-բուրմ, ժամ-ժամ(ի),
 կաթ-կաթ, կաթիկ-կաթիկ, կում-կում, մասն-մասն, մթխալ-մթխալ, պահ-պահ
 (ած+ած=մկբ) — սակալ-սակալ
 (թվ+թվ=մկբ) — մէկ-մէկ, մի-մի
 (դեր+դեր=բայ) — այլայլիլ

Անդրադառնալով ածանցումներին, նշենք, որ լիովին պահպանվում է հայոց լեզվի պատմական փուլերին բնորոշ պատկերը: Վերջածանցավոր բառերը անհամեմատ գերազանցում են նախածանցավորներին: Վերջիններից քավականին տարածում ունենան և հունաբանների ստեղծած թեր- ածանցները: Վերջածանցներից ավելի գործունե են րեբբալները. -ած և -ուկ ածանցները: Նկատելի է, որ ածանցավոր բառերը ևս օժտված են որոշակի գործառական ծանրաբեռնվածությամբ, հատկապես՝ տերմինաբանական գործառույթով: Առավել կենսունակ ածանցներից են.

- ան — անակցանք, անահոկ, անդիմական, անծակ, անյուսել, անօթեց
- թեր — թերածեծ, թերխորով
- ութին — աչացաութին, լսելութին, տքխասութին
- (ա)կան — արօտկան, լսական, ծառայկան
- իք — ըմբելիք, հոտոտելիք, ճաշակելիք, շոշափելիք, սպեղնիլիք, տեսանելիք
- աց — իմաց, հրահնաց, մոռաց
- ոց/նող — թանթխնոց, թխոց, թրջոց, ծրարոց, ճակտնոց, մրջմնոց, յիշոց, սրոց
- ոք — փշոք
- ուք — լւացուք, սկրթուք, քամուք
- ունք — խցմունք
- ուտ — ապառաժուտ, պարզուտ

А. Г. МУШЕГЯН — Общая лексическая характеристика лечебников XIII века.—В статье в общих чертах рассматриваются некоторые аспекты лексического материала армянских лечебников XIII века, в том числе отдельные диалектные и разговорные выражения и синонимические ряды, нашедшие свое отражение в среднеармянском литературном языке. Большое место отводится неологизмам, среди которых и неологизмы с терминологическим значением. Подчеркивается важное значение лексических заимствований, составляющих неотъемлемую часть общей лексики лечебников. Приводятся характерные модели образования терминологических единиц, а также словообразовательные особенности лексики данных средневековых трудов.

⁶ Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1991: